ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ԼԵՎՈՆԻ ՔՈԹԱՆՋՅԱՆ

ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք, կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտության համար իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2016

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГУРГЕН ЛЕВОНОВИЧ КОТАНДЖЯН

УГОЛОВНО- ПРАВОВЫЕ И КРИМИНОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ СВЯЗАННЫЕ С ПРОСТИТУЦИЕЙ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05- “Уголовное право, криминалогия, уголовно-исполнительное право”

ԵՐԵՎԱՆ - 2016

Ատենախոսության թեմանհաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա. Ռ. Մարգարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտություններ դոկտոր, պրոֆեսոր **Ս. Վ. Առաքելյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու **Վ. Ա. Շահնազարյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ոստիկանության կրթահամալիր**

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2016 թ.-ի հունիսի 24-ին, ժամը 15^{00}-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2016 թ.-ի մայիսի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղարի պաշտոնակատար, իրավ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ա. Գ. Վաղարշյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: кандидат юридических наук, доцент **А. Р. Маргарян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **С. В. Аракелян**

кандидат юридических наук **В. А. Шахназарян**

Ведущая организация: **Образовательный Комплекс Полиции РА**

Защита состоится 24 июня 2016 г. в 15^{00} часов на заседании Специального совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 24-го мая 2016 года.

Исполняющий обязанности ученого секретаря
специализированного совета,
доктор юридических наук, профессор **А. Г. Вагаршян**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսական հետազոտության թեմայի արդիականությունը: Ինչպես ցանկացած պետության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության քաղաքականության առաջնահերթ խնդիրներից է հասարակության կենսական կարևոր շահերի, հասարակության խաղաղ գոյակցությունը և կայուն զարգացումը ապահովող հասարակական հարաբերությունների ապահովումը: Այդ ենթատեքստում առանձնահատուկ կարևորություն ունի մարմնավաճառության կանոնակարգմանն ուղղված պետական քաղաքականության մշակումը:

Մարմնավաճառությունը որպես սոցիալ-իրավական երևույթ մշտապես գտնվել է քրեագետների ուշադրության առանցքում և տեղի տվել դրա կանոնակարգման առումով իրարամերժ մոտեցումների: Քրեագետների մի մասի կարծիքով այն էական վտանգ է ներկայացնում հանրության բարոյականության և առողջության համար, քանի որ խաթարվում են բարոյական արժեքները, տարածում են գտնում վեներական հիվանդությունները, ՄԻԱՎ ախտանիշը, աճում է հանցավորության ընդհանուր մակարդակը: Քրեագետների այս խմբի կարծիքով մարմնավաճառությամբ զբաղվելու համար պետք է սահմանել քրեական պատասխանատվություն: Մյուսների կարծիքով էլ, ընդհակառակը, մարմնավաճառությունը հարկավոր է օրինականացնել:

ՀՀ-ում այս հիմնախնդիրը ևս արդիական է: ՀՀ Ոստիկանության տվյալների համաձայն՝ 2010թ.–ին մարմնավաճառների նկատմամբ կազմվել է ընդամենը 149 արձանագրություն, 2011թ.-ին՝ 288, 2012-ին՝ 184, մինչդեռ 2015 թ. միայն առաջին 6 ամիսների ընթացքում ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարբեր բաժիններ են տարվել 2174 մարմնավաճառ: Ընդ որում, մտահոգիչ է ոչ միայն ՀՀ-ում առկա, այլև արտագնա մարմնավաճառության տարածումը: Ըստ ԱՄՆ պետդեպարտամենտի և ՄԱԿ-ի տվյալների՝ ԱՄԷ-ում և Թուրքիայում գրեթե 1000 հայ կանայք զբաղվում են մարմնավաճառությամբ, որոնց մեծ մասը թրաֆիքինգի զոհեր են:

Մարմնավաճառությունը նաև նպաստում է հանցագործությունների ընդհանուր մակարդակի աճին: Մասնավորապես, իրավապահ մարմինների աշխատակիցների հետմերկողմից իրականացված ուսումնասիրությունից պարզ դարձավ,

որ մարմնավաճառությունը հիմնականում նպաստում է գողությունների և թմրանյութերի ապօրինի տարածման աճին:

Ինչպես հայտնի է, ՀՀ-ում մարմնավաճառությունը քրեականացված չէ, այս երևույթի համար սահմանված է միայն վարչական պատասխանատվություն: Քրեականացված են, սակայն, մարմնավաճառության հետ կապված հանցագործությունները: ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվություն է սահմանված մարդու թրաֆիքինգի (հոդվ. 132), երեխայի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելու (հոդվ. 166) շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելու (հոդվ. 261) և պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու (հոդվ. 262) արարքների համար:

Սակայն որոշակի բարդություններ կան այդ հանցագործությունների որակման, նշված հանցագործությունների սահմանազատման հետ կապված: Այսպես, մեր կողմից ուսումնասիրված դատավճիռների վերլուծությունից պարզ դարձավ, որ, օրինակ բարդություններ են ծագում շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելու (հոդվ. 261) և պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու (հոդվ. 262) հանցակազմերի սահմանազատման ժամանակ:

Բավական բարդ է մարմնավաճառության կանխարգելման միջոցառումների մշակումը, քանի որ ոչ ՀՀ քրեական օրենսգրքում և ոչ էլ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում տրված չէ մարմնավաճառության հասկացությունը, չկա միասնական մոտեցում մարմնավաճառության սոցիալական բնույթի և այս երևույթը առաջացնող պատճառների վերաբերյալ: Բացի այդ, ՀՀ-ում մինչև այժմ չի իրականացվել մարմնավաճառության վերաբերյալ որևէ ընդգրկուն հետազոտություն, որով հնարավոր կլիներ բացահայտել մարմնավաճառության ներկա վիճակը, դրսևորումները, մարմնավաճառի անձը բնութագրող հատկանիշները:

Նման պայմաններում ակնհայտ է մարնավաճառությունն երևույթի ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Թեմայի մշակվածության աստիճանը: Մարմնավաճառության հիմնախնդիրները ուսումնասիրվում են գիտության տարբեր ճյուղերի կողմից: Բժշկության մեջ մարմնավաճառությունը, դրա հետևանքները և դրանց կանխման հարցերը հետազոտել են Բ.Պ. Դենիսովը, Ի. Ն. Ժուրավլյովան, Ի. Ս. Կո-

նը, Բ. Մ. Վիլլիսը, Ա. Ա. Տկաչենկոն, Ն.Ս. Ուստենկոն և այլ հեղինակներ: Մարմնավաճառության սոցիալական ասպեկտը հետազոտել են Յու. Ա. Կլեյբերգը, Ե. Վ. Յանկոն, Վ. Դ. Ռիժիկովը, Ա. Ա. Սելինը և ուրիշները: Մարմնավաճառության և նրա կանխարգելման հարցերին դեռևս 19-րդ և 20-րդ դարերում անդրադարձել են Վ. Մ. Բեխտերեվը, Ի. Բլոխը, Մ. Գերենտը, Վ. Դերյուժինսկին, Չ. Լոմբրոզոն, Ֆ. Լիխտը, Ֆ. Յանկովսկին. Վ.Մ. Տարանովսկին, Գ. Ֆերերոն և այլք: Վերջին տասնամյակների ընթացքում այս երևույթի գիտական ուսումնասիրություններով զբաղվել են Յու. Մ. Անտոնյանը, Ա. Ա. Գաբիանին, Յա. Ի. Գիլինսկին, Լ. Դ. Երոխինան, Ա. Ն. Իգնատովը. Վ.Ի. Լեբեդենկոն, Է. Ֆ. Պոբեգայլոն, Մ.Ա. Սելեզնովը, Ս.Լ. Ուլիցկին, Ն.Վ. Ուխանովան և ուրիշներ: Այդուհանդերձ, կան մարմնավաճառությանն առնչվող բամաթիվ հարցեր, որոնք գիտական հետազոտության կարիք ունեն: Հատկապես ՀՀ-ում այս հարցը լրջորեն չի ուսումնասիրվել և դրավերաբերյալ չկաորևէ համապարփակ աշխատանք:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսական հետազոտության նպատակը ՀՀ-ում մարմնավաճառության վիճակի և նրա հետ կապված հանցագործությունների ամբողջական վերլուծությունն է, ինչպես տեսական գրականության, այնպես էլ միջազգային փորձի ուսումնասիրության միջոցով, մարմնավաճառության կանխման օրենսդրական և այլ միջոցառումների մշակումն է և մարմնավաճառությանն առնչվող արարքների համար պատասխանատվությունն սահմանող օրենսդրության կատարելագործումն է:

Նշված նպատակների իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Սահմանվել են մարմնավաճառության հատկանիշները և դրանց հիման վրա առաջարկվել է մարմնավաճառության ձևակերպումը:
- Ուսումնասիրվել են մարմնավաճառությունը պայմանավորող հիմնական գործոնները:
- Իրավական վերլուծության են ենթարկվել մարմնավաճառության հետկապված հանցագործությունները:
- Վեր են հանվել մարմնավաճառությանբ զբաղվող անձանց կրիմինալոգիական առանձնահատկությունները:
- Մշակվել են մարմնավաճառության և դրան առնչվող բացասական երևույթների կանխմանն ուղղված միջոցա-

ռումներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը մարմնավաճառությանը վերաբերվող հասարակական հարաբերություններն են, հետազոտության առարկան մարմնավաճառության դրսևորումներն են, դրան նպաստող գործոնները, վիճակը, մարմնավաճառի անձը բնութագրող հատկանիշները, մարմնավաճառությանն առնչվող հանցագործությունները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմել է ճանաչողության համընդհանուր դիալեկտիկական մեթոդը: Հետազոտության արդյունքների հավաստիությունը և գիտական չափանիշների համապատասխանությունն ապահովվել է գիտահետազոտական աշխատանքի ընդհանուր և հատուկ այնպիսի մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են՝ տրամաբանական, պատմաիրավական, համեմատական-իրավական, վիճակագրական տվյալների վերլուծության, փաստաթղթերի ուսումնասիրության և վերլուծության:

Հետազոտության տեսական հիմքը: Որպես հետազոտության տեսական հիմք ծառայել են այնպիսի հեղինակների աշխատանքներ, ինչպիսիք են՝ Յու. Մ. Անտոնյանը, Գ.Ա. Ավանեսովը, Ի.Վ. Բոյկոն, Լ.Դ. Գաուխմանը Ա.Ի. Դոլգովան, Ա.Ի. Ելիստրատովը, Ն.Ի. Զագորոդնիկովը, Ա.Ի. Իգնատովը, Յու.Ի. Լյապունովը, Ն.Գ. Կադնիկովը, Ա.Ն. Կրասիկովը, Վ.Ն. Կուդրյավցեվը, Ն.Ֆ.Կուզնեցովան, Ե.Գ. Մանիչը. Վ.Դ. Մալկովը, Ա.Վ. Նաումովը, Ա.Ա. Պիոնտոկովսկին, Ա.Ի. Ռարոգը, Ֆ.Մ.Ռեշետնիկովը, Յու. Պ. Սմիրնովը, Ա.Ն. Տրայնինը, Ռ.Ս. Օվչինսկին և ուրիշները:

Հետազոտության նորմատիվ հիմքը: Հետազոտության նորմատիվ հիմքն են հանդիսացել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ Քրեական օրենսգիրքը, ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրքը, ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը, ԱՄՆ-ի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Իսպանիայի, Նիդերլանդների, Մակեդոնիայի, ՌԴ-ի, Բելառուսի, Չինաստանի և մի շարք այլ երկրների քրեական օրենսդրությունները: Հետազոտության հիմք են ծառայել նաև մարմնավաճառության և սեռական շահագործման կանխմանն ուղղված միջազգային փաստաթղթերը:

Հետազոտության փորձառական (Էմպիրիկ) հիմքը: Հետա-

զոտության փորձառական հիմքն են կազմել մարմնավաճառությամբ զբաղվող 42 անձանց, 120 քաղաքացիների շրջանում 2012թ.-ին մեր իրականացրած հարցումների, իրավապահ մարմինների 30 աշխատակիցների, 20 բժիշկների (մաշկավեներոլոգների և գինեկոլոգների) շրջանում իրականացված փորձագիտական հարցման արդյունքները, մարմնավաճառությամբ զբաղվող 15 անձանց հետ իրականացված հարցազրույցները: Ուսումնասիրվել են ՀՀ Քրեական օրենսգրքի 132, 132[2], 166, 261, 262 հոդվածներով 50 դատական գործերով կայացված դատավճիռները, ոստիկանության պաշտոնական կայքից ստացված վիճակագրական տվյալները, ՀՀ վիճակագրական տարեգրքերը, մարմնավաճառության վերաբերյալ լրատվամիջոցների հրապարակումները և այլն:

Ատենախոսության գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ ՀՀ-ում առաջին անգամ կատարվել է մարմնավաճառությանն առնչվող համակողմանի հետազոտություն: Հետազոտության շրջանակներում տրվել է մարմնավաճառության բնորոշումը, ներկայացվել են մարմնավաճառների բնութագրիչ հատկանիշները, բացահայտվել է մարմնավաճառությունը պայմանավորող գործոնների համակցությունը, ուսումնասիրվել է մարմնավաճառությանն առնչվող արարքների համար պատասխանատվությունն սահմանող օրենսդրությունը և մշակվել են առաջարկություններ դրանց կատարելագործման ուղղությամբ, դիտարկումներ են արվել տվյալ հանցակազմերի որակման առանձնահատկությունների կապակցությամբ: Նշվածի հետ միասին առաջարկություններ են մշակվել մարմնավաճառության և դրան վերաբերող բացասական երևույթների կանխման նպատակով:

Աշխատանքի գիտական նորույթն արտահայտվում է նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում.

1) Մարմնավաճառության օրինականացումը ՀՀ-ում ներկա ժամանակաշրջանում աննպատակահարմար է՝ հաշվի առնելով ինչպես հասարակության կողմից դրա հանդեպ բացասական դիրքորոշումը, դրա կանոնակարգման համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը, այնպես էլ մարմնավաճառության և սեռավարակների տարածման, հասարակության բարոյալքման հավանականությունը:

2) ՀՀ քրեական օրենսգրքում և վարչական իրավախախ-

տումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում օգտագործված «պոռնկություն» բառն անհրաժեշտ է փոխարինել «մարմնավաճառություն» բառով: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հոդված 179[1] –ում մարմնավաճառությունը սահմանել հետևյալ բովանդակությամբ. «Մարմնավաճառությունը գործունեության տեսակ է, որով անձը (մարմնավաճառը) մեկ այլ անձի (հաճախորդին) պարբերաբար կամ նման դիտավորությամբ մատուցում է սեքսուալ բնույթի ծառայություններ վարձատրության պայմանով՝ անկախ վարձատրության ձևից և դրա փոխանցման եղանակից»:

3) Թեև սոցիալ-տնտեսական գործոնները վճռորոշ նշանակություն ունեն ՀՀ-ում մարմնավաճառությամբ զբաղվող անձանց վարքագծի մոտիվացիայի ձևավորման գործում, սակայն նրանց կողմից մարմնավաճառությունը դիտվում է ոչ թե կենսական անհրաժեշտության խնդիրների լուծման, այլ բարեկեցիկ կյանքի միջոցների ձեռք բերելու եղանակ, ուստի մարմնավաճառությունը չի կարելի դիտել զուտ որպես սոցիալ-տնտեսական գործոններով պայմանավորված հիմնախնդիր:

4) Նկատի ունենալով մարմնավաճառության հետ կապված հանցագործությունների կանխման գործում դրանց հստակ օրենսդրական կանոնակարգման կարևորությունը, առաջարկվում է պատասխանատվություն սահմանել մարմնավաճառությամբ զբաղվելուն ոչ միայն շահադիտական դրդումներով, այլև ցանկացած այլ շարժառիթով ներգրավելու, ինչպես նաև հակելու համար և ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 261-ի 1-ին մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «այլ անձի մարմնավաճառությամբ զբաղվելուն ներգրավելը կամ հակելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի հոդված 132-ով նախատեսված հանցագործության հատկանիշները»:

5) ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 262-ի դիսպոզիցիան անհրաժեշտ է շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Մարմնավաճառությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելը, ղեկավարելը կամ պահելը կամ որևէ հանրային հաստատություն մարմնավաճառությամբ զբաղվելու համար օգտագործելը կամ այլ անձի մարմնավաճառությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան տրամադրե-

լը կամ մարմնավաճառությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելը...»:

6) Մարմնավաճառության և դրա հետ առնչվող հանցագործությունների կանխարգելումը ենթադրում է համալիր միջոցառումների իրականացում, որը պետք է ընդգրկի ինչպես կրթական (սեռական դաստիարակության վերաբերյալ կրթության ապահովում դպրոցական ծրագրերի շրջանակներում), սոցիալ-տնտեսական (մանկատների նախկին սաներին, անապահով ընտանիքների երեխաներին սոցիալ-տնտեսական աջակցություն), կազմակերպական (անչափահասների համար պռոնոկայքերի հասանելիության վերացում) այնպես էլ իրավական միջոցառումների իրականացում (ուսումնական կամ դաստիարակչական հաստատություններում և դրանց հարակից տարածքներում մարմնավաճառների կողմից իրենց ծառայությունների առաջարկման համար առավել խիստ վարչական պատասխանատվության սահմանում, վիկտիմոլոգիական կանխարգելում):

Ատենախոսության տեսական նշանակությունը: Ատենախոսության տեսական նշանակությունն այն է, որ ՀՀ-ում առաջին անգամ կատարվեց մարմնավաճառության և նրան առնչվող հանցագործությունների քրեաիրավական և կրիմինոլոգիական հարցերին առնչվող համակողմանի հետազոտություն, որի արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Ատենախոսության գործնական նշանակությունն այն է, որ դրա արդյունքները՝ առաջարկները, մոտեցումները, եզրակացությունները կարող են օգտագործվել մարմնավաճառության և դրան առնչող հանցագործությունների դեմ պայքարը կարգավորող իրավական ակտերի կատարելագործման, ՀՀ իրավապահ մարմինների կողմից նշված ուղղությամբ կատարվող պայքարի գործընթացի կազմակերպման, ուսումնական, մեթոդական և գիտական գրականության մշակման նպատակով:

Հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը: Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, որտեղ հաստատվել են ատենախոսության մեջ առկա հիմնական

տեսական վերլուծություններն ու եզրակացությունները: Հետազոտության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացված են հեղինակի հրապարակած գիտական հոդվածներում, ինչպես նաև դրանք օգտագործվում են կրիմինալոգիա առարկայի դասավանդման ժամանակ;

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը պատրաստված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխան, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են 9 ենթագլուխ, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ***առաջաբանում*** հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, բացահայտված է աշխատության գիտական նորույթը, ցույց են տրված հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը, մեթոդաբանական հիմքը և տեսական բազան, ձևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները, ներկայացված են հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության **առաջին գլխում՝** «Մարմնավաճառության սոցիալական բնույթը» ներկայացված են մարմնավաճառության հասկացությունը և դրսևորումները, մարմնավաճառության վիճակը ՀՀ-ում, մարմնավաճառությամբ զբաղվող անձանց կրիմինալոգիական բնութագիրը և մարմնավաճառությանը նպաստող գործոնները: Հեղինակը ուսումնասիրելով իրավաբանական գրականության մեջ առկա կարծիքները և Հայաստանում մարմնավաճառության առկա վիճակը սահմանել է մարմնավաճառության պարտադիր հատկանիշները որի հիման վրա էլ ներկայացրել է մարմնավաճառության բնորոշման իր տարբերակը: Ատենախոսը առանձնացնում է մարմնավաճառությունը բնութագրող հետևյալ պարտադիր հատկանիշները՝

1. Մարմնավաճառության հակաբարոյական բնույթը:
2. Մարմնավաճառությամբ զբաղվելու կայունությունը (սիստեմատիկությունը):
3. Սեռական հարաբերությունների հատուցելիությունը:

4. Սեռական հարաբերությունների արտասամուսնական բնույթը:

Վերոնշյալի հիման վրա հեղինակը տալիս է մարմնավաճառության հետևյալ սահմանումը. «Մարմնավաճառությունը գործունեության տեսակ է, որով անձը (մարմնավաճառը) մեկ այլ անձի (հաճախորդին) պարբերաբար կամ նման դիտավորությամբ մատուցում է սեքսուալ բնույթի ծառայություններ վարձատրության պայմանով՝ անկախ վարձատրության ձևից և փոխանցման եղանակից»: Եվ քանի որ ՀՀ օրենսդրության մեջ բացակայում է մարմնավաճառության բնորոշումը հեղինակը նպատակահարմար է համարում նշված սահմանումը համարել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում՝ մարմնավաճառության համար պատասխանատվություն սահմանող հոդվածում:

Ատենախոսը վերլուծելով արտասահմանյան երկրներում առկա մարմնավաճառության դրսևորումները և հաշվի առնելով ՀՀ-ում առկա իրողությունները առանձնացնում է մարմնավաճառության հետևյալ տեսակները՝

1) Ըստ դրանով զբաղվող սուբյեկտների՝ կանանց, տղամարդկանց (միասեռականների), չափահասների, անչափահասների և մանկական:

2) Ըստ կամքի արտահայտման եղանակի՝ կամավոր և հարկադիր:

3) Ըստ հիերարխիկ բնույթի՝ փողոցային, բնակարանային, հասարակաց տների, էլիտար:

Ատենախոսը առաջարկում է նաև ՀՀ օրենսդրության մեջ օգտագործված պոռնկություն բառը փոխարինել մարմնավաճառություն բառով, քանի որ կարծում է՝ պոռնկությունը ընդհանրական հասկացություն է, իսկ մարմնավաճառությունը բառը ավելի հստակ և ամբողջական է արտահայտում քննարկվող երևույթի բովանդակությունը:

Անդրադառնալով ՀՀ-ում մարմնավաճառության վիճակին՝ հեղինակը արձանագրում է,որ ըստ փորձագիտական տվյալների մարմնավաճառների քանակը անհամեմատ ավելի մեծ է ոստիկանության տեսադաշտում հայտնված մարմնավաճառների քանակից: Մասնավորապես, 2012թ.-ին մարմնավաճառների նկատմամբ կազմվել է ընդամենը 184 արձանագրություն, ընդ որում՝ քիչ չեն դեպքերը,երբ միևնույն անձի նկատմամբ արձանագրություն է կազմվել երկու և ավելի անգամ: Մինչդեռ 2015 թ.-ի միայն մեկ ամսվա ընթաց-

քում ոստիկանություն են տարվել 460 մարմնավաճառներ: Ասվածից հետևում է, որ իրավապահ մարմինները պետք է ակտիվացնեն իրենց ջանքերը մարմնավաճառների հայտնաբերման ուղղությամբ՝ առավել մեծ ուշադրություն դարձնելով համացանցում և զվարճանքի վայրերում իրենց ծառայություններն առաջարկող մարմնավաճառների վրա, քանի որ հեղինակի կատարած հետազոտությունները վկայում են, որ իրավապահների տեսադաշտում առավել ապես հայտնվում են փողոցային մարմնավաճառները:

Ատենախոսը նշում է,որ մարմնավաճառները իրենց զբաղմունքից զատ թույլ են տալիս այլ իրավախախտումներ. հեղինակի կողմից հարցման են ենթարկվել իրավապահ համակարգի 30 աշխատակիցներ: Այն հարցին, թե ինչ իրավախախտումներ են կատարում մարմնավաճառները, հարցվածների 53%-ը պատասխանել է՝ թմրանյութերի օգտագործում և տարածում, 30%-ը՝ գողություն, 13%-ը՝ շորթում և 4%ը՝ այլ հանցագործություններ: Սակայն, պատահում են դեպքեր, երբ մարմնավաճառներն են դառնում տուժողներ՝ իրենց նկատմամբ հաճախորդների կողմից կատարված հանցագործությունների դեպքում: Ըստ իրավապահների մարմնավաճառների հանդեպ հիմնական ոտնձգություններն են ՝ ծեծը, բռնությունը (56 %), գողությունը (16%), սեռական ոտնձգություն (7%),այլ հանցագործություններ (21%): Այս հարցը պարզելու համար նմանատիպ հարցեր ուղղվել են նաև մարմնավաճառներին: Այն հարցին, թե ձեզ երբևէ հաճախորդները ծեծել կամ ձեր նկատմամբ այլ ֆիզիկական բռնություն կատարել են, 57%-ը պատասխանել է՝ այո, իսկ 43%-ը՝ոչ: Իսկ, երբևէ հաճախորդները ձեզանից ինչ-որ իրեր գողացել են հարցին, 46%-ը պատասխանել է՝այո, 54%-ը՝ոչ:

Մարմնավաճառների կրիմինալոգիական բնութագիրը պարզելու նպատակով հեղինակի՝ 42 մարմնավաճառների շրջանում կատարած հարցումներից պարզ դարձավ, որ ՀՀ-ում մարմնավաճառությամբ առավել ապես զբաղվում են 19-30 տարիքային խմբի ներկայացուցիչները:Փորձագիտական հարցմանը ներգրավված իրավապահ մարմինների ներկայացուցիչների կարծիքով անչափահաս մարմնավաճառները կազմում են մարմնավաճառների ընդհանուր թվի 10-15%-ը, թեև հարցմանը ներգրավված բժիշկների տվյալներով տարեկան իրենց է դիմում ընդամենը 10-15 անչափահաս մարմնավաճառ: Սրաբացատրությունը կարող է լինել այն, որ անչա-

փահասներից շատերը չեն օգտվում բժշկի ծառայություններից, որը մեծ վտանգ է պարունակում թե իրենց, թե իրենց ծառայություններից օգտվողների առողջության համար:

Կրիմինալոգիական գրականության մեջ բազմիցս արտահայտվել է, այն գաղափարը, որ կրթական ցածր մակարդակը նպաստում է հակահասարակական և հակաիրավական վարքագծի դրսևորմանը, քանի որ անձը, իր մտահորիզոնի, աշխարհայացքի պայմաններում չտեսնելով խնդիրների լուծման այլ ուղիներ, դիմում է հակաիրավական կամ հակաբարոյական վարքագծի: Կրիմինալոգիական գրականության մեջ արտահայտված այս տեսակետը հաստատվում է նաև հեղինակի կողմից իրականացված հետազոտության արդյունքներով: Մասնավորապես, հեղինակի ուսումնասիրության շրջանակներում հայտնված մարմնավաճառների 54%-ը ուներ թերի միջնակարգ, 39%-ը՝ միջնակարգ և միայն 7%-ը՝ բարձրագույն կրթություն: Ընդորում, վերջիններս ընտրանքում հայտնված առավել բարձր վարձատրվող մարմնավաճառներն են:

Այն, որ կրթական մակարդակը ուղղակիորեն կապված է աշխատանքի ընտրության հետ ակնհայտ է նաև մարմնավաճառների նախկինում աշխատանքի փորձ ունենալու հանգամանքը պարզելու նպատակով տրված հարցի պատասխանների վերլուծությունից: Ըստ այդ արդյունքների՝ մարմնավաճառների ընդամենը 7%-ը ունի բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն: Հատկանշական է նաև, որ մինչև մարմնավաճառությամբ զբաղվելը մարմնավաճառների գերակշռող մասը՝ 85%-ը, երբեք չի աշխատել, 4%--ը աշխատել է պետական կառույցներում, 7%-ը՝ մասնավոր ոլորտում, իսկ 3%-ը զբաղվել է մուրացկանությամբ:

Հեղինակը համաձայն է այն տեսակետին մարմնավաճառությունը հիմնականում պայմանավորված է սոցիալ-հոգեբանական և տնտեսական գործոններով: Ճիշտ է, մարմնավաճառները նշում են, որ մարմնավաճառությամբ զբաղվելու պատճառը սոցիալական վիճակն է (հարցված մարմնավաճառների 64%-ը նշել է, որ մարմնավաճառությամբ է զբաղվում սոցիալական ծանր վիճակի պատճառով), այնուամենայնիվ մարմնավաճառությունը պայմանավորող գործոնների շարքում մեծ է սոցիալ-հոգեբանական պատճառների ներգործությունը: Հեղինակը սոցիալ-հոգեբանական գործոնների շարքում առանձնացնում է մարմնավաճառների ընտանեկան դրությունը, կրթական մակարդակը, հասարակության մեջ

տիրող բարքերը: Հեղինակը հավելում է, որ մարմնավաճառությանը նպաստող պատճառներից մեկն էլ սեռական դաստիարակության պատշաճ համակարգի բացակայությունն է: Ատենախոսը նաև փաստում է, որ հասարակությունը կամաց-կամաց ավելի հանդուրժող վերաբերմունք է դրսևորում վարքագծի այնպիսի տեսակների նկատմամբ, որոնք ավանդաբար համարվում էին անընդունելի բարոյականության տեսանկյունից (մարմնավաճառություն, մոլեխաղեր, թմրամոլություն և այլն): Ասվածը ապացուցում է նաև բնակչության շրջանում իրականացված հարցումները: Մասնավորապես, հարցման 120 մասնակիցներից միայն 56%-ն է նշել, որ մարմնավաճառների նկատմամբ բացասական վերաբերմունք ունի: Ատենախոսի կարծիքով մարմնավաճառության տարածմանն ու քարոզմանն էապես նպաստում է համացանցի զարգացումը: Հայաստանում, ի տարբերություն մի շարք այլ երկրների, չի գործում ֆիլտրացման մեթոդը, որը պոռնոգրաֆիկ կայքերը որոշ կատեգորիայի օգտագործողների (հատկապես անչափահասների) համար դարձնում է անհասանելի:

Հեղինակը համարում է, որ վերոնշյալ բացասական գործոնները մեղմելու համար կարևոր է դպրոցական ծրագրում սեռական դաստիարակության պատշաճ ծրագրի ներդնումը: Հարկավոր է, որ սեռական դաստիարակության առարկան պարունակի դրույթներ, որոնք ուղղված են ընտանեկան բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը: Բացի այդ, ցանկալի է, որ քննարկվող առարկան դասավանդվի բժշկի կամ հոգեբանի կողմից: Միանշանակ է, որ կանխարգելիչ ազդեցություն կարող է ունենալ հեռուստատեսությամբ ֆիլմերի և հաղորդումների ցուցադրումը, որոնք կներկայացնեն մարմնավաճառության պատճառած վնասները և մարմնավաճառների կյանքի տխուր ու դժբախտ կողմերը: Անհրաժեշտ է, որպեսզի պետությունը աջակցի և խրախուսի նման ֆիլմերի ու հաղորդումների պատրաստմանն ու ցուցադրմանը:

Ատենախոսության երկրորդ **Մարմնավաճառության հետ կապված հանցագործությունների քրեափրավական բնութագիրը գլխում** վերլուծության ենթարկվել մարմնավաճառությանն առնչվող հանցակազմերը և առաջարկություններ ներկայացվել դրանց կատարելագործման ուղղությամբ:

Հեղինակը, վերլուծելով մարդու թրաֆիքինգի հանցա-

կազմը, արձանագրում է, որ հոդվածի դիսպոզիցիայում որպես հացանքի կատարման եղանակ սահմանված հավաքագրելը դրսևորվում է տուժողին տարբեր եղանակներով թրաֆիքինգի մեջ ընդգրկելով: Ատենախոսը համաձայնում է այն տեսակետին,համաձայն որի՝ այն դեպքերում, երբ մարդկանց հավաքագրելու համար հրապարակվում են կեղծ հայտարարություններ կամ գովազդներ,բայց դրանք հանցավորներից անկախ հանգամանքերում խափանվում են, նման արարքները ենթակաեն որակման՝ որպես հավաքագրելու միջոցով մարդկանց առևտրի (թրաֆիքինգի) նախապատրաստություն: Հոդվ. 132-ում որպես սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ նշված է հատուկ նպատակ՝հանցագործության կատարումը շահագործման նպատակով: Այսինքն, անձին պատասխանատվության ենթարկելու համար պետք է ապացուցել, որ նա արարքը կատարել է մարդուն շահագործելու նպատակով: Ակնհայտ է, որ թրաֆիքինգ կատարողները, առաջնորդվելով շահադիտական շարժառիթով, կարող են ունենալ տարբեր նպատակներ: Մասնավորապես, մարդուն հանձնողը (վաճառողը) հետապնդում է շահույթ ստանալու նպատակ հենց մարդուն հանձնելուց և նա անտարբեր է տուժողի հետագա ճակատագրի հանդեպ և ոչ միշտ է գիտակցում, թե ստացողը ինչ նպատակ է հետապնդում: Իսկ նման իրավիճակը կարող է թույլ տալ վաճառողին խուսափել պատասխանատվությունից, քանի որ այս դեպքում հանցավորի դիտավորությունը ուղղված է ոչ թե տուժողին շահագործելուն, այլ նրանկատմամբ որևէ գործարքի կատարմանը: Տուժողին տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կարող են կատարվել նրան առանց հետագայում շահագործելու նպատակով, այնպես էլ առանց գիտակցելու, որ այդպիսի նպատակով է գործում վերջնական ձեռքբերողը: Խնդրի լուծման համար որոշ քրեագետներ առաջարկում են մարդուն շահագործելու նպատակը հանել դիսպոզիցիայից և այն նախատեսել որպես ծանրացնող հանգամանք: Սակայն, հեղինակը դեմ է այս մոտեցմանը և համարում է, որ նշված նպատակը պետք է ընդհանրապես հանել հոդվածից, քանի որ հոդվ.132-ի դիսպոզիցիայում անձին հավաքագրելու, թաքցնելու, փոխանցելու և այլ գործողությունների հետնշված է անձին շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու մասին: Իսկ եթե շահագործման նպատակը նախատեսվի որպես ծանրացնող հանգամանք, կստացվի, որ անձը ենթարկվում է շահագործման շահագործման նպատակով:

Ատենախոսը քննարկելով ՔՕ հոդված 261-ով նախատեսված հանցակազմը կարծում է,որ այս հանցակազմի օբյեկտիվ կողմի մեջ չի մտնում անձին պոռնկությամբ զբաղվելը շարունակելուն հարկադրելը, այն պատճառով, որ ներգրավել պոռնկության մեջ նշանակում է ներգրավել այնպիսի անձի, որը տվյալ պահին այդ գործունեությամբ չի զբաղվում: հնարավոր չէ անձին ներգրավել այնպիսի ոլորտ, որտեղ նա արդեն գործում է: Այդպիսի գործողությունները պետք է որակվեն՝ ելնելով ներգրավված անձին տրվող սպառնալքի բնույթից: Չնայած արդարացված կլիներ հոդվ. 261-ի դիսպոզիցիան լրացնել «անձի՝պոռնկությամբ զբաղվելը դադարեցնելուն խոչնդոտելը» արտահայտությամբ: Ընդ որում, այստեղ խոչնդոտելու եղանակները համընկնում են ներգրավելու եղանակներին: Այսինքն, խոչնդոտել հնարավոր է ինչպես բռնության գործադրման, այնպես էլ առանց դրա՝ համոզելու, նյութապես շահագրգռելու և այլ եղանակներով: Խոսելով այս հանցագործության սուբյեկտիվ կողմի մասին՝ անհրաժեշտ է նշել, որ այն հնարավոր է կատարել միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն, հանցավորը գիտակցում է, որ մեկ այլ անձի ներգրավում է պոռնկության մեջ, և ցանկանում է դա: Եթե նա ներգրավում է անչափահասի և գիտակցում է դա, ապա արարքը կվորակվի հոդվ. 166-ով: Այս հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նպատակը: Հոդվ. 261-ում սահմանված է հանցագործության կատարման շահադիտական նպատակի մասին: Այստեղից հետևում է, որ հանցակազմը առկա է, երբ հանցավորը անձին ներգրավում է պոռնկության մեջ՝նպատակ հետապնդելով վերջինիս գործունեությունից ստանալ նյութական օգուտ: Մեր կարծիքով շահադիտական նպատակի նախատեսումը դիսպոզիցիայում արդարացված չէ: Ճիշտ է, այս հանցագործությունը հիմնականում կատարվում է շահադիտական նպատակով, սակայն չի բացառվում արարքի կատարումը այլ նպատակներով ևս:

Հոդվ. 262-ի դիսպոզիցիայում օգտագործված է «...կամ գույքային օգուտ ստանալով՝պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելը»արտահայտությունը, ինչից հետևում է, որ օրենսդիրը հոդվածում նշված գործողությունների մի մասի (հաստատություն ստեղծելու,պահելու, ղեկավարելու և այլնի) կատարման համար չի նախատեսում գույքային օգուտ ստանալու նպատակ, իսկ պոռնկությամբ զբաղվելուն

այլ ձևով նպաստելու համար նախատեսում է այդպիսի նպատակ, ինչը արդարացված չէ: Այդ պատճառով ատենախոսը ավելի ճիշտ է համարում հոդվ. 262-ի դիսպոզիցիան շարադրել հետևյալ բովանդակությամբ. «շահադիտական նպատակով պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելը, ղեկավարելը կամ պահելը կամ որևէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելը կամ այլ անձի պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելը կամ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելը...»: Այս պարագայում գույքային օգուտ ստանալու նպատակը կվերաբերի հոդվածում նշված բոլոր գործողություններին:

Ատենախոսության **մարմնավաճառության կանխարգելումը** գլխում ներկայացված է մարմնավաճառության դեմ պայքարը ըստ միջազգային և արտասահմանյան երկրների օրենսդրության ՀՀ-ում մարմնավաճառության կանխարգելման միջոցառումները:

Հեղինակի կարծիքով մարմնավաճառության դեմ պայքարում կենտրոնական հարցն այն է, թե ինչ կարգավիճակ պետք է ունենա մարմնավաճառությունը և մարմնավաճառը, այսինքն ինչպիսի վերաբերմունք պետք է դրսևորի պետությունը այս երևույթի հանդեպ: Տարբերակները երեքն են՝ մարմնավաճառության քրեականացում, մարմնավաճառությամբ զբաղվելու համար վարչական պատասխանատվության սահմանում, մարմնավաճառության օրինականացում: Ատենախոսը համարում է, որ մարմնավաճառության քրեականացումը արդյունավետ լինել չի կարող: Նախ, պատմական փորձը վկայում է, որ մարմնավաճառների դեմ կիրառվող կոշտ միջոցները դրական արդյունքներ չեն տալիս: ՀԽՍՀ 1961թ.-ի քրեական օրենսգրքով մարմնավաճառությունը պատժելի էր, սակայն Հայաստանում և Խորհրդային այլ հանրապետություններում նշված երևույթը առկա էր, պարզապես պետական մակարդակով քարոզվում էր, որ ԽՍՀՄ-ում մարմնավաճառություն գոյություն չունի: Մարմնավաճառությամբ զբաղվելու համար քրեական պատիժ սահմանելը նաև վտանգավոր է այն առումով, որ դակարող է բերել սեռական բնույթի հանցագործությունների աճին: Մասնավորապես, Ավստիայում մարմնավաճառության քրեականացումից հետո բռնաբարությունների թիվը աճեց մոտավորապես 2,5 անգամ: Հեղինակի կարծիքով, մարմնավաճառության քրեականացու-

մը պարունակում է մեկ այլ վտանգ ևս: Սոցիալ-տնտեսական զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներում մարմնավաճառության քրեականացումը կարող է հանգեցնել կոռուպցիայի աճին, հատկապես իրավապահ մարմինների աշխատակիցների շրջանում: Կարծում ենք, ներկայիս ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում նման վտանգ կարող է առկայ լինել նաև ՀՀ-ում: Մարմնավաճառության քրեականացմանը դեմ են արտահայտվում նաև մեր քաղաքացիները: Այսպես, 120 հարցվածների միայն 25%-ն է կողմ արտահայտվել, որ մարմնավաճառությունը համարվի հանցագործություն:

Մարմնավաճառության կանխարգելման հաջորդ մարտավարությունը մարմնավաճառության օրինականացնումն է: Այս եղանակի կողմնակիցները մարմնավաճառության օրինականացնումը հիմնավորում են նրանով, որ դա կհեշտացնի մարմնավաճառների նկատմամբ բժշկական հսկողության իրականացումը, կպաշտպանի մարմնավաճառներին, իսկ պետությանը կբերի որոշակի ֆինանսական օգուտներ: Սակայն, ատենախոսը համամիտ չէ նշված մոտեցմանը և կարծում է, որ մարմնավաճառության օրինականացումը չի կարողանալ լուծել տվյալ խնդիրները: Նախ, մարմնավաճառության օրինականացումը չի երաշխավորում ապօրինի մարմնավաճառության վերացումը: Դրա մասին վկայում է այն փաստը, որ այն պետություններում, որտեղ պաշտոնապես մարմնավաճառությունը թույլատրված է (Նիդերլանդներ, Գերմանիա) գոյություն ունի նաև ապօրինի մարմնավաճառություն: Երկրորդ, մարմնավաճառության պաշտոնապես գրանցումը կարող է բերել մարմնավաճառների նրանց ծառայություններից օգտվողների թվի աճին: Եվ վերջապես, այս քայլին պատրաստ չէ նաև հասարակությունը: Հարցված քաղաքացիների ընդամենը 40%-ն է կողմ արտահայտվել մարմնավաճառության օրինականացման օգտին: Մարմնավաճառության օրինականացմանը դեմ են հարցված իրավապահների 56%-ը: Այսպես, մարմնավաճառների 80%-ը նշել են, որ կողմ են մարմնավաճառության օրինականացմանը: Մարմնավաճառության օրինականացման գործընթացը կարող է առաջ բերել որոշ բարդություններ: Մասնավորապես, ինչ չափով և կարգով են հարկվելու մարմնավաճառները, ինչպես է հաշվարկվելու նրանց եկամուտը: Ենթադրվում է, որ մարմնավաճառության օրինականացումից հետո մարմնավաճառները պետք է վճարեն սահմանված չափով գումար:

Այս ամենը հաշվի առնելով՝ նպատակահարմար է համարում, որ մարմնավաճառությունը պատժվի վարչական տույժով (այս տարբերակն էլ ներկայում գործում է ՀՀ-ում), սակայն դրահետմիասին անհրաժեշտ է նախատեսել օրենսդրական և այլ միջոցառումներ: Չնայած, վարչական պատասխանատվության սահմանումը նույնպես չի կարող կանխարգելել մարմնավաճառությունը, այնուամենայնիվ, այն ավելի ընդունելի է քրեականացման և օրինականացման հետհամեմատած: Մարմնավաճառության համար վարչական պատասխանատվությունն սահմանելով՝ պետությունը իր արդարացի վերաբերվունքն է դրսևորում այս երևույթի նկատմամբ: Այդպիսի վերաբերմունքը ատենախոսի համոզմամբ արդարացի է, քանի որ մարմնավաճառությունը իր հանրային վտանգավորության աստիճանով չի համապատասխանում հանցագործություն լինելու չափանիշներին, այդ պատճառով չի կարող ընդգրկվել քրեական օրենսգրքում, սակայն այն չի կարելի համարել օրինական գործունեության տեսակ, ուստի պետք է պատժվի վարչական պատասխանատվության միջոցներով: Փաստորեն, օրենսդիրը իրավացիորեն մարմնավաճառությունը համարում է վարչական իրավախախտում՝ հաշվի առնելով դրա հանրային վտանգավորությունը: Մարմնավաճառությունը չդիտարկելով որպես օրինական զբաղմունք՝ պետությունը, ըստ էության, ցույց է տալիս, որ անհրաժեշտ է պայքարել դրադեմ:

Կարծիում ենք՝ մարմնավաճառության կանխարգելման համար վարչական պատասխանատվությունն սահմանելու հետ միասին անհրաժեշ է ձեռնարկել մի շարք միջոցառումներ: Որպես վաղ կանխարգելման եղանակ, հեղինակը առաջարկում է սեռական դաստիարակություն պատշաճ համակարգի ընդգրկելը դպրոցական ծրագրում, պոռնոգրաֆիկ կայքերի արգելափակումը ՀՀ տարածքում, պետության կողմից համապատասխան քարոզչության իրականացումը և այլն: Սակայն, բացի պոռնոգրաֆիկ կայքերից այլ կայքերում (գովազդային, սոցիալական) նույպես տեղադրվում են մարմնավաճառների գովազդներ: Իրավապահ մարմինների խնդիրն է հայտաբերել գովազդ տեղադրող մարմնավաճառներին և պահել նրանց հսկողության տակ, ինչպես նաև հանել այդ գովազդները համացանցից:

Ատենախոսության ***եզրակացության*** մեջ հեղինակն արել է ներքոհիշյալ եզրահանգումները, բերել համապատասխան առաջարկություններ:

Ատենախոսի դիրքորոշման համաձայն՝ մարմնավաճառության կանխման միջոցառումները պետք է լինեն հնարավորինս հստակ, նպատակային և հեշտկիրառելի՝ չպահանջելով մեծ ֆինանսական ծախսեր և երկար ժամանակ: Կանխման միջոցառումներ ձեռնարկելիս պետք է ուշադրություն դարձնել մարմնավաճառությանն առնչվող հանցագործությունների դեմ պայքարին և դրանցից տուժած անձանց շահերի պաշտպանությանը: Քանի որ մարմնավաճառությանն առնչվող հանցանքների աճը փոխկապակցված է մարմնավաճառության մակարդակի աճի հետ: Դրա հետ մեկտեղ հարկավոր է պայքարել մարմնավաճառությանն առնչվող այլ բացասական երևույթների հետ, ինչպիսիք են՝ մարմնավաճառների և հաճախորդների, ինպես նաև մարմնավաճառների միջև բռնության կիրառումը, անչափահասների՝ մարմնավաճառների ծառայություններից օգտվելը, սեռավարակների տարածումը և այլն: Մասնավորապես, առաջարկում ենք մարմնավաճառության դեմ պայքարի հետևյալ միջոցները՝

- Համացանցում իրենց ծառայություններն առաջարկող մարմնավաճառների հայտնաբերում և նրանց նկատմամբ հսկողության սահմանում:
- Հեռուստատեսությամբ ֆիլմերի և հաղորդումների ցուցադրում, որոնք կներկայացնեն մարմնավաճառության պատճառած վնասները և մարմնավաճառների կյանքի տխուր ու դժբախտկողմերը:
- Մարմնավաճառների հետ բացատրական աշխատանքները արդյունավետդարձնելու համար առաջարկում ենք յուրաքանչյուր մարմնավաճառի համար կազմել տվյալների անհատական քարտ և բացատրական աշխատանքները իրականացնել հոգեբանի մասնակցությամբ:
- Անհրաժեշտ է բացատրական աշխատանքներ կատարել օդանավակայաններում, հատկապես թրաֆիքինգի նպատակակետերկներ մեկնող ուղևորների շրջանում՝ թրաֆիքինգի զոհ դառնալուց խուսափելու համար անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելով նրանց:
- Առաջարկում ենք վարչական իրավախախտումների վե-

որաբերյալ օրենսգրքի հոդվ. 179[1]-ում ներառել հետևյալ դրությունը՝ «սույն հոդվածով պատասխանատվության ենթարկված անձինք ենթակա են պարտադիր բժշկական ստուգման, իսկ նրանց մոտ վեներական հիվանդություն հայտնաբերելու դեպքում վերջիններս ենթակա են հարկադիր բուժման»:

Բացի մարմնավաճառության կանխարգելմանն ուղղված հարցերից որոշակի խնդիրներ կան մարմնավաճառության հետ կապված հացագործությունների համար պատասխանատվությունն նախատեսող հոդվածներում:

- Մշակվել են հոդված 166-ի կատարելագործմանն ուղղված հետևյալ առաջարկությունները՝
- Հոդված 166-ի 3-րդ մասի առաջին կետը պատասխանատվություն է սահմանում հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքները երկու կամ ավելի անձանց նկատմամբ կատարելու համար: Առաջարկում ենք հոդվածում «երկու կամ ավելի անձանց» փոխարեն օգտագործել «երկու կամ ավելի անչափահասների» արտահայտությունը:
- Որոշակի խնդիրներ կան հոդված 166-ի սանկցիայի առումով: Հոդվածի առաջին մասով սահմանված է 1-5 տարի ժամկետով ազատազրկում: Հոդված 261-ի համար սահմանված է 1-3 տարի ժամկետով ազատազրկում: Առաջարկում ենք բարձրացնել հոդված 166-ի սանկցիայի նվազագույն չեմը
- Առաջարկում ենք հոդված 261-ի 2-րդ մասում ավելացնել հետևյալ ծանրացնող հանգամանքները՝ նույն արարքը,որը կատարվել է անչափահասին օգտագործելով և նույն արարքը,որը կատարվել է հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին օգտագործելով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹԵՐՆ ԱՐՏԱՑՈԼԱԾ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում՝

1. Մարմնավաճառության կանխման միջոցառումները // Պետություն և իրավունք, թիվ 1(63), Երևան 2014, էջեր 98-105:
2. Մարդու թրաֆիքինգի քրեաիրավական հիմնախնդիրները // Դատական իշխանություն, թիվ 1-2(175-176), Երևան 2014, էջեր 36-43:
3. Մարմնավաճառությունը քրեաիրավական արգելքների տեսանկյունից // Դատական իշխանություն, թիվ 8(169) , Երևան, 2013, էջեր 10-15
4. Մարմնավաճառությամբ զբաղվող անձանց կրիմինալոգիական բնութագիրը ՀՀ-ում// ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014 թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատարակություն, ԵՊՀ 2015, էջեր 256-267:

Гурген Левонович Котанджян

УГОЛОВНО- ПРАВОВЫЕ И КРИМИНОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ СВЯЗАННЫЕ С ПРОСТИТУЦИЕЙ

РЕЗЮМЕ

Тема кандидатской диссертации посвящена проблемам занятия проституцией и другим негативным явлениям, связанным с проституцией в Республике Армения. Актуальность темы обусловлена в первую очередь тем, что проституция представляет значительную угрозу для физического и нравственного здоровья населения, так, как она искажает нравственные ценности, способствует распространению венерических заболеваний, синдрома ВИЧ, увеличивает общий уровень преступности. В РА проституция не считается преступлением и за занятие ею предусмотрена административная ответственность, однако предусмотрена уголовная ответственность для деяний, сопряженных с проституцией. Существуют определенные проблемы, связанные с квалификацией и, в частности, разграничением данных составов преступленний.

Довольно сложна разработка мер по предотвращению проституции, потому что ни Уголовный кодекс, ни Кодекс об административных правонарушениях не дают четкой формулировки проституции, не вырабатывают единого подхода к социальной сущности причин, порождающих это явление. Кроме того, в Армении до сих пор не осуществлялись комплексные исследования явления проституции, в которых было бы определено современное состояние проституции, формы занятия проституцией, криминологические особенности лиц занимающихся проституцией.

В таких условиях очевидна необходимость научного изучения данного явления.

Целью диссертационного исследования является изучение состояния проституции и преступлений, связанных с ней в РА, а также предупреждение проституции с помощью изучения теоретической литературы и международной практики, усовершенствование законадательства, предусматривающие ответственность за деяния, связанных с проституцией.

Теоретической основой диссертации являются базовые работы отечественных и зарубежных ученых в сфере уголовного права, криминологии, психологии, медицины. Диссертационное исследование основано на различных научных источниках - монографиях, научных публикациях, комментариях соответствующих законодательных актов.

Эмпирической основой диссертации являются результаты экспертной оценки и опросов среди работников правоохранительных органов,

врачей, граждан, а также лиц, занимающихся проституцией, судебные приговоры по рассматриваемым статьям, статистические данные, взятые с официальных сайтов полиции и статистической службы, публикации СМИ о проституции.

На основе вышеуказанных источников было сформулировано понятие о проституции, были представлены криминологические особенности лиц, занимающихся проституцией, выявлены факторы, обусловливающие проституцию, а также были разработаны предложения в плане усовершенствования законадательства, касающегося деяний, связанных с занятием проституцией. Кроме того, были представлены предложения, касающиеся вопросов профилактики проституции и связанных с ней других негативных явлений.

В диссертации предлагается в кодексе административных правонарушений РА в статье 179^1 сформулировать следующее определение проституции: проституция – это вид деятельности, в котором лицо (проститутка) периодически предоставляет услуги сексуального характера другому лицу (клиенту) за вознаграждение вне зависимости от его формы и способа передачи.

Автор предлагает следующие меры профилактики проституции: внедрение должной системы сексуального образования в школьную программу с преподаванием этого предмета врачами или психологами, блокирование порнографических сайтов на территории РА, составление карточек личных данных проституток и проведение разъяснительных работ с проститутками с участием психолога. Автор предлагает также показ фильмов и передач по телевидению, демонстрирующих печальную и тяжелую сторону жизни проституток.

Автор считает, что для снижения трафикинга будет полезным введение поощрительной нормы в УК РА, в частности, предлагается в статье 132 УК РА ввести следующее положение: “лицо, впервые совершившее деяние, предусмотренное частью первой или пунктом первым части второй статьи 132 УК РА, которое до эксплуатации потерпевшего освободило его и спососбствовало раскрытию преступления, освобождается от уголовной ответственности, если в его деянии нет другого состава преступления”.

Диссертант считает важным выявление проституток, предлагающих свои услуги в интернете и установление надзора над ними.

Gurgen Levon Kotanjyan

CRIMINAL AND CRIMINOLOGICAL PROBLEMS RELATED TO PROSTITUTION

RESUME

The PhD thesis is devoted to problems of prostitution and other negative phenomena associated with prostitution in the Republic of Armenia. Actuality of the theme is due primarily to the fact that prostitution is a significant threat to the physical and moral health of the population, as it distorts the moral values, contributes to the spread of sexually transmitted diseases, HIV syndrome, increases the overall level of crime. In RA, prostitution is not a crime and for its practice, for prostitution is stipulated administrative responsibility, but criminal liability is stipulated for acts associated with prostitution. There are certain problems related to the qualification and, in particular, the distinction between structures of a crime.

It is quite complicated the development of measures to prevent prostitution, because neither the Criminal Code nor the Code of Administrative Offences do not give the clear definition of prostitution, there has not produced a uniform approach to the social nature of the causes of this phenomenon. In addition, in Armenia have not yet conducted comprehensive studies of the phenomenon of prostitution, in which it would be determined the current state of prostitution, forms of prostitution, criminological characteristics of persons involved in prostitution.

In such circumstances, it is obvious the necessity the scientific study of this phenomenon.

The target of this Dissertation research is to study the state of prostitution, and crimes related to it in the RA, and the prevention of prostitution through the study the theoretical literature and international practice, the improvement the legislation establishing liability for the acts associated with prostitution.

The theoretical basis of the thesis are the basic works national and overseas scholars in the field of criminal law, criminology, psychology, and medicine. The dissertation research is based on various scientific sources - monographs, scientific articles, comments of the relevant laws.

The empirical basis of the thesis are the results of expert assessments and surveys among law enforcement officials, doctors, citizens, and persons engaged in prostitution, court sentences on concidered articles, statistics

taken from the official websites of the police and the statistical service, media publications on prostitution.

On the basis of above mentioned sources is formulated the concept of prostitution, presented criminological characteristics of prostitutes, the factors that cause prostitution, as well as drafted proposals in terms of improvement the legislation concerningng to actions related to prostitution. In addition, there are presented the issues of prevention of prostitution and its associated other negative phenomena.

In the thesis is proposed to formulate the following definition of prostitution in the Code of Administrative Offences of RA in the article 179^1: prostitution - is an activity in which the person (prostitute) periodically or with such an intention provides sexual services to another person (the client) for a fee regardless of its form and method of transmission.

The author suggests the following measures to prevent prostitution: the introduction of an adequate system of sex education in the school curriculum teaching of this subject by physicians or psychologists, blocking pornographic sites on the territory of the Republic of Armenia, drawing cards of personal data of prostitutes and conducting explanatory work with prostitutes involving a psychologists. The author also offers a films and television programs screenings that demonstrate sorrowful and hard side of the life of prostitutes.

The author considers in order to reduce trafficking will be useful to introduce an promotional norm in the Criminal Code of the Republic of Armenia, in particular, it is proposed to introduce the following provision in Article 132 of the Criminal Code of RA: "The person who has committed an offense pursuant to the first part or the second part of the first paragraph of Article 132 of the Criminal Code of RA, which till the explotation of the victim freed him and support to exposure the crime, is exempted from criminal liability if his act does not constitute an another element of crime".

Dissertant considers it is important the detection of the prostitutes offering their services on the Internet and the establishment of supervision over them.